

21.506

Рыболовные экспедиции  
и рыболовные суда из Краснодара.

Брилль

33  
P-16

1933

15 JAN 2010

Հ Ա Խ Հ ԼՈՒԳՈՂՎՈՒՄԱՅ. ՈՒՍՏՈՒՆՎԱՆՔԵՐՈՂՄԱՆ ՍԵԿՏՈՐ

4/15/2007  
05/05/2007

Հ Ա 639

33

P-16

БИБЛИОТЕКА  
ИНСТИТУТА  
ВОСТОКОВЕДЕНИЯ  
Академии Наук  
СССР

ՔԱՂԱՔԱՆԵՏԵՍՈՒԹՅԱՆ  
ՅԵՎ  
ՏՆՏԵՍԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ  
ԾՐԱԳՐԵՐ

10-ԱՄՅԱԿՆԵՐԻ, ՏԵԽՆԻԿՈՒՄՆԵՐԻ, ԲԱՆԹԱԿՆԵՐԻ ՅԵՎ  
ՅՈՒԹՆԱՄՅԱԿԻ ԲԱԶԱՅԻ ՎՐԱ ԳՈՐԾՈՂ ՖԱՐԳՈՐԾՈՒՄՆԵՐԻ  
ՀԱՄԱՐ

ՊԵՏՐՈՎԱՏ

1938

ՅԵՐԵՎԱՆ

33  
P-16

29.08.2013

21506

## ԳԱՆԳԱԼԵՏՆԵՍՈՒԹՅՈՒՆ

Բ. Ա. Յ. Ա. Կ. Ա. Ն.

Միջնակարգ դպրոցի քաղաքատեսության ծրագիրը  
մշակված է Համեր (բ)կ Կենտկոմի 1932 թ. սպոստոսի 25-ի  
և Կենտգործկոմի սեպտեմբերի 19-ի վորոշումների հիման  
վրա:

Նախորդ տարիների ծրագրերի համեմատությամբ,  
ավել ծրագիրը համաձայնեցված է սովորողների պատ-  
րաստության մակարդակի, քաղաքատեսությանը հատ-  
կացված ժամերի քանակի և ծրագրի մշակման իրական հնա-  
րավորությունների հետ:

Ծրագրի յելակետն ե՝ ապահովել քաղաքատեսու-  
թյան հիմունքների իրական, հիմնովին և սիստեմատիկ  
յուրացումը միջնակարգ դպրոցների սովորողների կողմից:

Հիմնականում ծրագիրը պետք է մշակվի ըստ Աեզարի  
դասագրքի և Մարքսի, Լենինի, Ստալինի յերկերի առան-  
ձին հատվածների:

Դասատուն պետք է սիստեմատիկ ու հետեղականորեն  
տա դասավանդվող առարկան, ամեն կերպ ողնելով սովորող-  
ների ինքնուրույն աշխատանքներին: Ծրագրում նշված  
են այն թեմաները և դասընթացի առանձին մասերը, վորոնք  
մշակվում են միայն դասախոսության միջոցով, ինչպես և  
այն թեմաները, վորոնք բացի դասախոսությունից, մշակ-  
վում են նաև խմբակային պարագմունքների միջոցով՝ դա-  
ստովի անմիջական ղեկավարությամբ:

Հակամարքսիստական տեսությունների քննադատու-  
թյունը ավել ծրագրում մինիմումի յե հասցված: Այդ  
տեսությունների նկարագրությունը և քննադատությունը  
մեծ չափով լինելու յե դասատվի կողմից:

Ծրագրում, քաղաքատեսության ամենից կարևոր  
բաժիններում, կատարված են եքոկուրսիաներ և բերված են  
իլյուստրացիաներ խորհրդային պատմությունից, վորոնք

Գուտ. խմբագիր՝ Խ. Այվազյան  
Անդրական խմբագիր՝ Հար. Պարույր  
Տնօք. խմբագիր՝ Գ. Զենյան  
Մրացքներ՝ Յ. Սահմանական  
Համամական և արտադրության 23 նույնի 1933 թ.  
Սահմանական և ապելի 5 պահումի 1933 թ.  
Դաշտի № 8247 (բ),

ակրանի տպարան, երան. № 2680, պատճեր № 1776, ակրան Գ 1000

3629 · 82

ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ԻНСТИՏՈՒՏԻ  
ՅՈՒՆԻՑՈՎԵԼԵՆԻ  
Ակադեմիա Խայ  
СССР

նպատակը չե սակայն քաղաքատնտեսության և խորհրդային տնտեսության զուգահեռ և սիստեմատիկ դասընթացը տալ:

Թեմաների թվարկումը և դասատվի ժամերի որինակելի բաշխումն ըստ թեմաների. (հիմք է ընդունված այլ գերատեսչությունների տեխնիկումներին հատկացված 70 ժամը. մյուս տիպի հիմնարկները ժամերի այս բաշխումը պետք է հարմարեցնեն իրենց ընդհանուր ժամերի քանակին).

### Ծ Ր Ա Գ Ի Բ

#### ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հասկացողությունն հասարակական ֆորմացիաների մասին: Վերաբարեղության պրոցեսը և նրա հասարակական ձևը: Արտադրողական ուժեր և արտադրական հարաբերություններ:

Քաղաքատնտեսության առարկան: «Քաղաքատընտեսությունը լայն իմաստով՝ վորպես մի գիտություն, վորն ուսումնասիրում ե մարդկային հասարակություններում նյութական կենսական բարիքների արտադրությունը և փոխանակությունը զեկավարող որենքները» (ԵՆԳԵԼՍ): Քաղաքատնտեսությունը նեղ իմաստով՝ վորպես մի գիտություն, վորն ուսումնասիրում ե արտադրության կապիտալիստական ձևի որինաչափությունները և դրանց համապատասխան արտադրական հարաբերություններն՝ իրենց առաջացման, զարգացման ու կործանման մեջ: Մարքսիզմի յերեք աղբյուրները, յերեք բաղկացուցիչ մասերը:

Մարքսի խոշորագույն նախորդները (Սմիթ, Ռիկարդո): Վուլֆար քաղաքատնտեսությունը և Մարքսի պայքարը նրա դեմ: Մարքսի տնտեսական ուսմունքի զարգացումը լենինի աշխատություններում:

Մարքս-լենինյան քաղաքատնտեսությունը վորպես պրոլետարիատի դասակարգային պայքարի զենք:

Քաղաքատնտեսության հակամարքսիստական սահմանումների քննադատությունը:

Ա. ԹԵՄԱ. ԱՊՐԱՆՔ ՅԵՎ. ՓՈՂ

1. Ապրանքը վորպես բուրժուական հասարակության պարզագույն բջիջ: Ապրանքի հակասությունը .— սպառողական արժեք և արժեք: Աշխատանքը վորպես արժեքի սուբստան-

ցիա: Ապրանքի մեջ պարունակվող աշխատանքի յերկակի բնույթի կոնկրետ աշխատանք և արսորակտ աշխատանք. մասնավոր և հասարակական աշխատանք. հասարակակայինութեն անհրաժեշտ աշխատանք: Պարզ և բարդ աշխատանք:

2. Փոխանակային արժեքը վորպես արժեքի ձև: Արժեքի չարաբերական և համարժեք (եկվիվալենտ) ձևերը: Արժեքի ձևերն իրենց զարգացման մեջ.— արժեքի պարզ, ծավալուն, ընդհանուր և փողային ձևերը:

3. Ապրանքային արտադրության զարգացումը և ապրանքային արժեքի վերածումն ապրանքի և փողի: Փողը վորպես ընդհանուր եկվիվալենտ: Գինը վորպես արժեքի փողային արտահայտություն: Փողի Փունկցիաները.— փողը վորպես արժեքի չափանիշ, վորպես ըրջանառության միջոց, կուտակման միջոց (գանձ), վճարման միջոց: Համաշխարհային փող: Շրջանառության համար անհրաժեշտ փողի քանակը: Դրամ: Թղթադրամներ և նրանց եյությունը:

Արժեքը վորպես չարժման որենք ապրանքային տնտեսության մեջ: Ընդհանուր գաղափար ապրանքային ֆետիշիզմի մասին: Արժեքի պատմական բնույթը:

4. Մարքսի արժեքի տնտեսության իդեալիստական (Ռուբին) և մեխանիստական (Բողդանով, Բուխարին) աղավաղումների քննադատությունը:

5. ԽՍՀՄ-ի տնտեսության պլանային բնույթը: Արժեքի որենքի անկիրառելիությունը ԽՍՀՄ-ի եկոնոմիկայի նկատմամբ: Փողի բնույթը ԽՍՀՄ-ում:

Բ ԹԵՄԱ. ԿԱՊԻՏԱԼ ՅԵՎ. ՀԱՎԵԼՅԱԼ ԱՐԺԵՔ

1. Պարզ ապրանքային արտադրության վերածումը կապիտալիստականի: Փողի վերածումը կապիտալի: Բանվորական ուժի վերածումն ապրանքի: Ապրանքի սպառողական արժեքը բանվորական ուժն է: Բանվորական ուժի արժեքը: Անհրաժեշտ և հավելյալ աշխատանք: Հավելյալ արժեքի արտադրություն: Կապիտալիստական շահագործման տարրերությունը մինչկապիտալիստական շահագործմանից:

2. Կապիտալ. Կապիտալի բաժանումը մշտականի և փոփոխականի: Կապիտալի առանձին մասերի տարրերը դերը հավելյալ արժեքի արտադրության գործում: Հավելյալ արժեքի նորման: Բացարձակ և հարաբերական հավելյալ արժեքի արտադրություն: Կապիտալիստական արտադրու-

թյան կազմակերպման դարպացման յերեք փուլերը: Հասարակի կոռպերացիա, մանուֆակտուրա, կապիտալիստական գործարան: Վարձու աշխատանք. վարձու ստրկություն: Մէքենայի աղեցությունը բանվոր դասակարգի դրության վրա: Բանվոր դասակարգի շահագործման ուժեղացման միջոցները:

Բանվորական որվա յերկարացումը: Կապիտալիստական ուղիղունալիգացիա և բանվոր դասակարգի շահագործման ուժեղացում: Բանվորների պայքարը բանվորական որվա կրծատման համար և ռեֆորմիստական արհմիությունների և սոցիալ-ֆաշիստների՝ կապիտալիստական ուղիղունալիգացիայի ապահովանների դավաճանական քաղաքականությունը:

3. ԽՍՀՄ-ի ձեռնարկությունների հետեղողական-սոցիալիստական բնույթը: Կորոնաեսությունները տնտեսության սոցիալիստական ձև են: Վարձու աշխատանքի, հավելյալ արժեքի և կապիտալի կատեղորիաների անկիրառությունը սոցիալիստական ձեռնարկությունների նկատմամբ: Աշխատանքի վերածումն ամոթալի բեռից՝ «պատվի, փառքի, սիրագործության ու հերոսության գործի» (ՍՏԱԼԻՆ):

#### Դ. ԹԵՄԱ. ԱՇԽԱՏԱՎԱՐՁ

1. Աշխատավարձը վորակես բանվորական ուժի արժեքի և գնի փոխակերպված ձև: Անվանական (նորմինալ) և ռեալ աշխատավարձ: Աշխատավարձի ձևերը՝ ժամանակավարձ, գործարքային, պրեմիալ, մասնակցություն ձեռնարկության շահույթին և այլն: Աշխատավարձի տարբեր ձևերը վորակես շահագործման ուժեղացման և նրա դիմակավորման տարբեր ձևեր: Ժամանակակից տնտեսական կրիզիսի ուժեղացումը և աշխատավարձի սիստեմատիկ իջեցումը բոլոր կապիտալիստական յերկրներում, վորակես բանվոր դասակարգի հաշվին կրիզիսից յելք գտնելու՝ բուրժուական փորձերից մեկը: Բանվոր դասակարգի պայքարն աշխատավարձի բարձրացման համար և սոցիալ-ֆաշիստների դավաճանական դերը: Կարմիր պրոֆմիությունների հեղափոխական պայքարը բուրժուադիսից կողմից բանվոր դասակարգի վրա կատարվող հարձակման դեմ:

2. Աշխատավարձի կատեղորիայի անկիրառությունը ԽՍՀՄ-ում: Աշխատանքի վարձատրության սոցիալիստա-

կան սկզբունքը՝ կապված աշխատանքի քանակի և վորակի հետ: Աշխատավարձի հավասարեցման մանր-բուրժուական բնույթը և դրա դեմ վճռական պայքարը մղելու անհրաժեշտությունը:

#### Դ. ԹԵՄԱ. ԿԱՊԻՏԱԼԻ ԿՈՒՏԱԿՈՒՄԸ ՅԵՎ ԲԱՆՎՈՐ ԴԱՍԱՎԱՐՁԻ ԱՂՔԱՏԱՅԱՅՈՒՄԸ

1. Հասարակ և ընդլայնած կապիտալիստական վերարտադրություն: Կապիտալի վերարտադրությունը վորակես կապիտալիստական արտադրական հարաբերությունների վերարտադրություն: Մշտական և փոփոխական կապիտալի վերարտադրություն:

2. Կապիտալիստական կուտակման ընդհանուր որենքը: Կապիտալի որգանական կազմը և նրա աճը: Կապիտալի համակենտրոնացման և կենտրոնացման սլոցեսը: Մանր արտադրության քայքայումը խոչըր կապիտալի կողմից: Կապիտալի համակենտրոնացման և կենտրոնացման ազդեցությունը բանվոր դասակարգի դրության վրա: Կապիտալիստական կուտակում և հարաբերական գերբնակչություն:

Արդյունաբերական պահեստի բանակը վորակես արտադրության կապիտալիստական ձևի անհրաժեշտ պայման:

Ազգարնակության կապիտալիստական որենքը: Արդյունաբերական պահեստի բանակի վերածումը գործազուրկների մշտական բանակի՝ կապիտալիզմի հետպատերազմյան ըրջանում: Բանվոր դասակարգի բացարձակ և հարաբերական աղքատացումը: Հարստության կուտակումը մի բևում, իսկ մյուս բևում «աղքատության, տգիտության և տրկության» կուտակում:

3. Աղքատացման տեսության ժիտումը սոցիալ-ֆաշիստների կողմից: ԽՍՀՄ-ի բանվոր դասակարգի և աշխատավորների կենսական մակարդակի մերեւը:

Գործադրկության վոչնչացումը ԽՍՀՄ-ում:

#### Ե. ԹԵՄԱ. ՀԱՎԵԼՑԱԼ ԱՐԺԵՔԻ ԲԱՇԽՈՒՄԸ

1. Կապիտալի արտադրությունը և ըրջանառությունը: Ընդհանուր գաղափար կապիտալի ըրջապտույտի մասին: Արդյունաբերական կապիտալ, նրա փողալին, արտադրական և ապրանքային ձևերը: Կապիտալի շարժման ձևերի առանձ-

նացումը և ֆունկցիաների բաժանումը բուրժուազիայի ներսում: Հավելյալ արժեքի ձևերը և նրանց նշանակությունը:

2. Արտադրության ծախքերը և ապրանքի իրական արժեքը: Եահույթը վորպես հավելյալ արժեքի փոխակերպված ձև: Եահույթի նորման: Եահույթի նորման վորոշող գործուներ-չահապրծման նորմա, կապիտալի որդանական կազմը, կապիտալի շրջանառության արագությունը: Կոնկուրենցիա կապիտալների միջև շահույթի միջին նորմայի սահմանում: Արտադրանքի գինը վորպես արժեքի փոխակերպված ձև:

Եահույթի նորմայի իջնելու տեսդենցը: Դրան հակադադող գործուները:

«Եահույթի» բնույթը ԽՍՀՄ-ում: Եահույթի միջին նորմայի և արտադրության գնի որենքի անկիրառելիությունը ԽՍՀՄ-ի եկոնոմիկայի նկատմամբ:

3. Առեարական կապիտալը վորպես արդյունաբերական կապիտալի առանձնացված մաս: Առեարական կապիտալը գործունելության բնագավառը, նրա գերը: Առեարական շահույթ: Առեարական ծառայողների շահագործումը առեարական կապիտալի կողմից: Մանր արդյունաբերության շահագործումը առեարական կապիտալի կողմից: Խորհրդավին առելվարի բնույթն ու դերը:

4. Փոխառիկ կապիտալ: Փոխառիկ կապիտալի տարրերությունն արդյունաբերական և առեարական կապիտալից: Տոկոսը վորպես փոխառիկ կապիտալի գին: Տոկոս և ձեռնարկատիրական յեկամուս: Տոկոսի րարձրությունը: Վարկ: Բանկեր: Բանկերի հիմնական ոպերացիաները: Վարկի դերը կապիտալիստական տնտեսության մեջ:

Փոխառիկ կապիտալի կատեգորիայի անկիրառելիությունը ԽՍՀՄ-ի տնտեսության նկատմամբ: Տնտեսաշվարկ և կոնտրոլ ուղղությունը: Միջոցների մոբիլիզացիայի նշանակությունը սոցիալիստական շինարարության համար:

5. Ռենտա և նրա եյությունը: Դիմերենցիալ և բացարձակ ռենտա: Հողային ռենտան վորպես հավելյալ արժեքի մաս: Հողի գինը վորպես կապիտալի վերածված ռենտա: Ռենտայի աճումը: Ռենտայի աղղեցությունը բանք արտադրության վրա: Ժառակարգի դրության վատթարացման վրա: Հողի աղղայնացումը և ռենտայի վոքչացումը ԽՍՀՄ-ում:

## Զ ԹԵՄԱ. ԿԱՊԻՏԱԼԻ ԶԱՐԴԱԾՈՒՄԸ ԳՅՈՒՂԱՑՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ

1. Հողի մասնավոր սեփականությունը վորպես գյուղատնտեսության մեջ արտադրողական ուժերի զարգացման արդելակ: Զարգացած կապիտալիզմի պայմաններում հողի ազգայնացման անիրադելիությունը: կապիտալի գործացումը գյուղատնտեսության մեջ և մանր ու միջակ գյուղացիության տնտեսության քայլայումը: Գյուղի չերտավորումը կապիտալիզմի պայմաններում: Դասակարգերը կապիտալիզմի ժամանակ և դասակարգային պայլայը գյուղում:

2. Մարքսը, Ենգելսը, Լենինը և Ստալինը գյուղատնտեսության սոցիալիստական վերափոխման մասին՝ պրոլետարիատի գիտատուրայի պայմաններում: Դասակարգային պայքարը գյուղում՝ պրոլետարիատի գիտատուրայի պայմաններում: Համատարած կոլեկտիվացում և նրա հիման վրա գյուղի շերտավորման ջլատումը և դրա հետ կապված՝ աղքատացման ու պառապերիզմի վոչչացումը գյուղում:

Է ԹԵՄԱ. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ԿԱՊԻՏԱԼԻ ՎԵՐԱԲԾԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՃԴՆԱԺԱՄԵՐԸ

1. Հասարակական կապիտալի վերաբռնը գյուղատնտեսությունը: Հասարակական կապիտալի յերկու ստորաբաժնում: Վերաբռնը գյուղության պրոցես և արտադրանքի իրացում:

2. Կապիտալիստական ձգնաժամերը: Ձգնաժամերի անխուսափելիությունը կապիտալիզմի ժամանակ: Ձգնաժամերի փուլերը: Ձգնաժամերի պարբերականությունը: Արտադրության հասարակական բնույթի և յուրացման մասնավոր ձևի մեջ յեղած հակասությունը վորպես ձգնաժամերի հիմնական պատճառ: Կապիտալիստական արտադրության տնտեսական և մասսաների թերասպառումը վորպես կապիտալիզմի այդ հիմնական հակասության արտահայտություն: Ձգնաժամերը և դասակարգային պայքարը: Ձգնաժամերի աղղեցությունը բանվոր դասակարգի դրության վրա: Ձգնաժամերի աղղեցությունը մանր արտադրության վրա: Ժամանակակից համաշխարհային տնտեսական կրիզիսը: Ձգնաժամերի բուրժիւական և սոցիալ-ֆաշիստական տեսությունների քննադատությունը:

3. ԽՍՀՄ-ի սոցիալիստական տնտեսության պլանային բնույթը և ձգնաժամերի անհնարինությունը։ ԽՍՀՄ-ի տնտեսական գծվարությունների բնույթը և նրանց հաղթահարման ռողբները։

Հ ԹԵՇԱ. ԻՄՊԵՐԻԱԼԻ ԶՄ ՅԵՎ ԿԱՊԻՏԱԼԻ ԶՄԻ ԸՆԴՀԱ-  
ՆՈՒԹ ՃԳՆԱԺՄԱՆ.

1. Իմպերիալիզմը վորպես կապիտալիզմի բարձրագույն փուլ: Իմպերիալիզմի հինգ հատկանիշներն ըստ Լենինի:  
Արտադրության համակենտրոնացումը և մենաշնորհները:

Կապիտալիզմի վերածումը մոնոպոլիստական կապիտալիզմի: Մենաշնորհը վորպես իմպերիալիզմի տնտեսական չէմք: Մոնոպոլիստական կազմակերպությունների տեսակները—կարտելներ, սինդիկատներ, տրեստներ: Ակցիոներական ընկերություններ: Կոնկորենցիայի ուժեղացումն ու խորացումը մենաշնորհի պայմաններում:

2. Բանկերի նոր դերը իմպերիալիզմի ժամանակ։ Բանկերի միաձուլումն արդյունաբերության հետ։ Ֆինանսական ինքաղիտայ և ֆինանսական ոլիգարխիա։

3. Կապիտալի արտահանումը : Կապիտալիստական չերկների պայքարը կապիտալի ներդրման ըրջանների, սպառման շուկաների և հումքի աղբյուրների համար :

4. Աշխարհի բաժանումը կապիտալիստների միությունների մեջ:Աշխարհի տերրիտորիալ բաժանումը խոչը պետությունների մեջ: Պայքար աշխարհի վերաբաժանման համար: Պատերազմների անխուսափելիությունն իմպերիալիզմի ժամանակ: Գաղութային ճնշման ուժեղացումը: Հեղափոխական շարժման ուժեղացումը գաղութներում:

5. Իմպերիալիզմը վորպես պարաղիտական կապիտալիզմ : Իմպերիալիզմի եպոխայում կապիտալիզմի նեխման տեսնդենցների ուժեղացումը : Իմպերիալիզմը վորպես կապիտալիզմի վերջին ետապ և համաշխարհային պրոլետարական Հեղափոխության նախորեն : Իմպերիալիզմի ժամանակ ու պորտյունիզմի ուժեղացումը բանվորական շարժման մեջ : Այդ ոպորտյունիզմի սոցիալական արմատները : Կապիտալիզմի հակառակությունների սրումն իմպերիալիզմի ժամանակ : Հեղափոխական շարժման ուժեղացումը :

6. Կապիտալիզմի դարձացման անհամապատճեն լան-

որենքը: Հենինը և Ստալինը կապիտալիզմի տնտեսական և քաղաքական դարգացման անհամաշխափության որենքի ուժեղացման մասին իմպերիալիզմի շրջանում և մի յերկրութ սոցիալիզմի հաղթանակի հնարավորության մասին:

7. Ընդհանուր հասկացողություն իմպերիալիզմի սոցիալ-Փաշխտական տեսությունների մասին և նրանց քննադատությունը։ Աջերի՝ «Կազմակերպված կապիտալիզմի» տեսությունը և նրա քննադատությունը։ Կապիտալիզմի «ավտոմատիկ կործանման» Ու. Լուքսեմբուրգի կիսամենչիկան տեսությունը և նրա քննադատությունը։

8. Հետպատերազմյան կապիտալիզմի դարաշրջանը  
վորպես կապիտալիստական սիստեմի ընդհանուր ճգնաժամի  
գարագրչան։ Հոկտեմբերյան հեղափոխությունը և աշխարհի  
քաժանումը յերկու տրամադրությունների՝  
կապիտալիստականի և սոցիալիստականի։ Յերկու սիստեմ-  
ների պայքարը։ Հետպատերազմյան կապիտալիզմի յերեք  
շրջանները։ Յերրորդ շրջանի բնորոշումը։ Մասնակի կապի-  
տալիստական ստարիլիզացիայի վախճանը և անցումն հեղա-  
փոխությունների ու պատերազմների նոր շրջանի։

9. Ժամանակակից տնտեսական կրիզիսը : Տնտեսական փլուզումը կապիտալիստական յերկրներում : Դաժան ճգնաժամը և արդյունաբերական արտադրության կատաստրոֆիկ անկումը կապիտալիստական յերկրներում : Արտադրական ապարատի զգալի մասի անգործությունը : Արտադրողական ուժերի և նյութական արժեքների վոչնչացումը :

Դաժան ճգնաժամ և արտադրության կատաստրոֆիկ անկում գյուղատնտեսության մեջ: Յանքսերի տարածության կրծատում: Գյուղատնտեսության մեքենաների արտադրության ու սպառման ուժեղ կրծատում: Գյուղացիական ու ֆերմերական անտեսությունների արագ աճող քայլքում: Առևտրի կատաստրոֆիկ կրծատում: Մանր և միջակ առեվտրականների քայլքում: Խոշոր առևտրական ֆիրմաների մնանկացում: Առևտրական ձեռնարկությունները մնում են ապրանքներով լցված այն ժամանակի, յերբ աշխատավոր մասսաների զնողունակությունը շարունակում է ընկնել: Գործազրկության չտեսնված աճումը: Աշխատավորների կենսական մակարդակի անկումը: Տեխնիկական կաղըերի ցրումը: Գիտական մտքի գերբար-

դասիան։ Բուրժուազիայի փորձերը—կրիզիսից յելք գտնել՝ բանվոր դասակարգի, դյուլացիության և քաղաքային մանր բուրժուազիայի վրա հարձակում դորձելով։ Իմպերիալիստական պատերազմների և ԽՍՀՄ-ի վեմ ինտերվենցիայի նախապատճառառման։ Յերկու սիստեմների պայքարի սրումը՝ կապիտալիստական յերկրների ձգնաժամի խորացման և ԽՍՀՄ-ում սոցիալիզմի աճման զուգընթաց։ Դասակարգային պայքարի խիստ սրումը և հեղափոխական վերելքի աճն իմպերիալիստական յերկրներում, զաղութներում և կիսադաշտներում։

Բանվոր դասակարգի պայքարը կոմինտերնի ղեկավարությամբ—կրիզիսից հեղափոխական յելք գտնելու, պրոլետարիատի դիկտատորայի համար։

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ.

Ներածություն։—Սեգալ. «Քաղաքատնտեսության համառոտ դասընթաց» (ոռուսերեն) 3—7 էջ։

Ա. թեմա. — 1) Սեգալ. 8—48 էջ. 2) Լենին, 3-րդ հր. (ոռուս), 18-րդ հատոր, «Կ. Մ'արքո»—«Արժեք» բաժինը։

Բ. թեմա. — 1) Սեգալ, 49—90 էջ. 2) Մարքս. «Աշխատավարձ, գին և շահույթ», 7-րդ բաժին. 3) Լենին, 3-րդ հրատ, 16-րդ հատոր, «Քրաինք քամելու գիտական սիստեմը» հոդվածը։

Գ. թեմա. — 1) Սեգալ. 91—100 էջ. 2) Մարքս. «Աշխատավարձ, գին և շահույթ» (9-րդ բաժին). թ) «Վարձու աշխատանք և կապիտալ» («Ի՞նչ և աշխատավարձ»)։

Դ. թեմա. — 1) Սեգալ. 101—133 էջ. 2) Լենին, 3-րդ հրատ., 16-րդ հատոր. «Աղքատացումը կապիտալիստական հասարակության մեջ», 212—213 էջ։ 3) Ստալին. «Զեկուցում կկ և կվ. հունվարյան պլենումում՝ 1-ին հնգամյակի հանրագումարների մասին» (5-րդ բաժին)։

Ե. թեմա. — 1) Սեգալ, 134—170 էջ. 2) Ստալին. «Լենինիզմի հարցերը». «Զրույց ամերիկյան տուաջին բանվորական պատգամակորության հետ», սեպտ. 9 1927 թ.: 372—419 էջ։

Զ թեմա. — 1) Սեգալ. 171—185 էջ. 2) Ենգելս. «Կոմունիզմի սկզբունքները», 20-րդ հարց. 3) Ստալին. «Զեկուցում կկ և կվ. հունվարյան պլենումում՝ 1-ին հնգամյակի հանրագումարների մասին» (4-րդ բաժ.)։

Է թեմա. — 1) Սեգալ. 186—215 էջ. 2) «Կոմունիստական մանիֆեստ» (Հայերեն, 1932 թ. հր.) 31—33 էջ։

Ը թեմա. — 1) Սեգալ. 216—279 էջ. 2) Լենին. «Իմպերիալիզմը վորպես կապիտալիզմի նորագույն ետապ», (20-րդ հատ. 3-րդ ոռուս. հրատ.), 7-րդ բաժ. 141—143 էջ. 3) Ստալին. «Զեկուցում 1-ին հնգամյակի հանրագումարների մասին» (3—4-րդ բաժինները)։

ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ԻՆՍԻՏՈՒ  
ՏՈՒԹՅՈՒՆ  
ԱԿADEMII ՆԱУԿ  
СССР

Ծ Ր Ա Գ Ի Բ

ԽՍՀՄ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ  
ԲԱՑԱՏՐԱԿԱՆ

Միջնակարգ դպրոցներում, տեխնիկումներում, բան-  
ֆակներում տնտեսական քաղաքականության դասավանդ-  
ման նպատակն ե՝ սովորողներին ըմբռնել տալ խորհրդային  
եկոնոմիկայի գարզացման ուղիները և կոնկրետ պատկերա-  
ցում տալ սոցիալիստական շինարարության վորոշող բնա-  
գավառներում՝ կուսակցության և կառավարության տնտե-  
սուկան քաղաքականության մասին։

Ծրագիրը բաղկացած է 7 թեմայից, վորոնցից վերջին  
թեման անցվում է լեկցիոն ձեվով, իսկ մնացած թեմա-  
ները՝ դասախոսության և կենդանի զրույցի կարգով։ Յեթե  
տնտ. քաղաքատնտեսությանը հատկացրած ժամերի միջին  
թիվն ընդունենք 50, դրանից I թեմային հատկացվում է  
6 ժամ, IV թեմային՝ 10 ժամ, II, III, V և VI թեմաներին՝  
հատկացվում է 8-ական ժամ, իսկ վերջին թեմային՝ 2 ժամ։

Գրականությունը մատնանշված է սովորողների հա-  
մար։ Յեվ վորովհետեւ հրապարակի վրա տվյալ դասընթացի  
համար պիտանի դասագիրք չկա, ուստի տրվում են գլխա-  
վորապես լենինի և Ստալինի աշխատություններից հատ-  
վածներ և կուսակցության ու կառավարության վորոշում-  
ները։

Նյութի մշակումը, ինչպես վերեւում ասվեց, կրելու յե  
դասախոսության և սովորողների կողմից մշակված նյութի  
վրա հիմնված՝ կենդանի զրույցի ընույթ։ Սակայն  
մի կողմից՝ դասագրքի, հետեապես և սիստեմատիկ կերպով  
մշակված նյութի բացակայությունը, մյուս կողմից՝ ինք-  
նուրույն աշխատանքի համար սովորողների սահմանափակ  
ժամանակը, վերջիններիս հնարավորություն չեն տալիս

ինքնուրույն կերպով մշակելու համապատասխան թեմայի  
մեջ ընդգրկված բոլոր հարցերին վերաբերող մատերիալը  
ուստի և վողջ թեման ընդգրկող ընդհանուր դասախոսու-  
թյունից հետո, նյութի խմբային մշակման ժամանակ յու-  
րաքանչյուր թեմայից վորոշ կետեր դարձյալ ինքը գասա-  
տուն և տալիս և միայն մնացած կետերի շուրջն և ծավալվում  
զրույցը։ Այսպես, որինակ՝ առաջին թեմայում առաջին և  
յերկրորդ կետերը դասախոսում ե դասատուն, յերրորդ կետը  
մշակվում ե զրույցի միջոցով, վորից հետո դասատուն պատ-  
մում ե 4-րդ կետը, ապա տեղի յե ունենում զրույց 5-րդ և  
6-րդ կետերի շուրջը, ըստ վորում վողջ թեման մշակելիս  
հիմնական կանոնները պիտի հանդիսանա ճիշտ և հիմնովին կեր-  
պով բարունել ՆԵՊ-ը, ՆԵՊ-ի վերջին ըրջանը-վերակառուց-  
ման ըրջանը՝ սոցիալիզմի թևակուման փուլը։

Հատուկ ուշադրություն պիտի դարձնել 1-ին հնդամյա-  
կի կատարման հանրագումարների և զարգացման արդի ետա-  
պի ըմբռնման վրա։ Յերրորդ, չորրորդ, հինգերրորդ և վե-  
ցերրորդ թեմաներում նմանապես առաջին կետերը դասատուն  
ե պատմում, իսկ մյուս կետերի շուրջը զրույց ե տեղի ունե-  
նում։ Յերրորդ թեմայում հիմնական ուշադրությունը պիտի  
նվիրել առաջին հնդամյակի հաջող կատարման արդյունք  
հանդիսացող՝ ինդուստրացման հանրագումարներին և յերկ-  
րորդ հնդամյակի առաջին տարվա կանոններին։ Չորրորդ  
թեմայում գլխավոր ուշադրությունը պիտի դարձնել կոլ-  
տրնտեսությունների կազմակերպական ամրացմանն ու ներ-  
կա ետապում գյուղում տարվող դասակարգային պայքարի  
ձևերի վրա։ Սրանց լուսաբանման հիմք ու յելակետ պիտի  
հանդիսանա կենտրոնի հունվարյան պլենումում ընկեր։ Ստա-  
լինի արտասանած ճառը «Գյուղի աշխատանքների մասին»։

Աջ և «Ճախ» ոպորտունիստական, հակահեղափոխական  
տրոցիկոստական և բուրժուական տեսությունների քննադա-  
տությունը լինում է գլխավորապես դասատիլի կողմից։

Յերրորդ, չորրորդ, հինգերրորդ և վեցերրորդ թեմաների  
մշակման ժամանակ անհրաժեշտ է ոգատգործել տվյալ կրթա-  
կան հիմնարկի վայրի, ըրջանի գործարանների, կոլտնտե-  
սությունների կոլտնտեսությունների աշխատանքների և առհա-  
սարակ խորհրդային առևտրի վիճակը բնորոշող համապա-  
տասխան նյութեր։

Ծ Ր Ա Գ Ի Բ

Ի ԹԵՄԱ. ՄԱՐՔՍ-ԼԵՆԻՆՑԱՆ ՈՒՍՄՈՒՆՔՆ ԱՆՑՈՂԻԿ ՇՐՋԱՆԻ, ԿՈՄՈՒՆԻԶՄԻ ՈՒ ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ՄԱՍԻՆ

1. Մարքսի, Ենգելսի, Լենինի և Ստալինի ուսմունքն անցողիկ շրջանի, առջիալիզմի, վորպես կոմունիզմի առաջին փուլի, և կոմունիզմի մասին: Իմպերիալիզմի շրջանում կապիտալիզմի անհամաշխափ զարգացման որենքը և մի յերկրում սացիալիզմ կառուցելու հնարավորությունը: Իմպերիալիզմ՝ վորպես կապիտալիզմի վերջին շրջանի հիմնական բնութագրումը: Իմպերիալիզմի ժամանակ կապիտալիզմի բոլոր հակառակարգի սրումը:

Հոկտեմբերյան հեղափոխությունը վորպես անցողիկ շրջանի և համաշխարհային պրոլետարական հեղափոխության ակիզը:

2. Անցողիկ շրջան.— Կապիտալիզմից դեպի կոմունիզմ անցողիկ շրջանի անխուսափելիությունը: Կոմունիստական հասարակության բնութագրումը: Սոցիալիզմը կոմունիզմի առաջին փուլն ե: Մարքսը, Լենինը, Ստալինը անցողիկ շրջանի՝ վորպես պրոլետարիատի դիկտուտուրայի շրջանի մասին: Անցողիկ շրջանի եկոնոմիկան հեղափոխական ուղիով սոցիալիստական եկոնոմիկայի վերափոխելը. յերկրի խնդուստրացումը և պարզ ապրանքային տնտեսության վերափոխումը սոցիալիստական տնտեսության, կապիտալիստական տարրերի սահմանափակումն ու արտամղումը, իսկ հետո և համատարած կոլեկտիվացման հիման վրա կուլտության՝ վորպես դասակարգի վոչնչացումը:

Դասակարգերը և դասակարգային պայքարը պրոլետարիատի դիկտուտուրայի շրջանում: Անցողիկ շրջանի եկոնոմիկայի զարգացման պլանային բնույթը: Սոցիալիստական սեկտորի առաջատար գերիշխող դրության առկայությունը

և ժող. տնտեսության իշխող բարձունքները պրոլետարական պետության ձեռքին գտնվելը վորպես պլանային տնտեսության նախապայման: Կապիտալիզմի պայմաններում պլանավորման անհնարինությունը:

Անդասակարգ սոցիալիստական հասարակության կառուցումը յերկրորդ հնգամյակի հիմնական քաղաքական խնդիրն ե: Ընդհանրապես կապիտալիստական տարրերի և դասակարգերի վերջնական լիկվիդացիան, տնտեսության և մարդկանց գիտակցության մեջ կապիտալիզմի մնացորդների հաղթահարումը, յերկրի վող աշխատավոր բնակչության վերածումը սոցիալիստական հասարակության գիտական ակտիվ կառուցողների: Դասակարգային պայքարը յերկրորդ հնգամյակում: Բանվոր դասակարգի պատմական դերն առասպարակ դասակարգերի վերայիման գործում:

Առաջին հնգամյակի հանրագումարները վորպես մի յերկրում սոցիալիզմի կառուցման լենինյան տեսության փայլուն հաստատում:

Կապիտալիզմը սոցիալիզմի մեջ խաղաղ ներաճելու՝ սոցիալ-ֆաշիստական տեսությունների քննադատություն.՝ «կազմակերպված կապիտալիզմ», «տնտեսական դեմոկրատիա»: Քննադատություն անցողիկ շրջանի աջ-ոպորտունիստական տեսության, վորը փաստորեն ժիտում և մի յերկրում սոցիալիզմ կառուցելու հնարավորաթյունը: Քննադատություն անցողիկ շրջանի հակահեղափոխական արոցիկիստական տեսության, վորը ժիտում և իմպերիալիզմի շրջանում կապիտալիզմի անհամաշխափ զարգացման որենքը և մի յերկրում սոցիալիզմ կառուցելու հնարավորաթյունը:

3. Սոցիալիզմ-կոմունիզմի առաջին փուլը: Արտադրության միջոցների լրիվ համայնացում, մարդու կողմից մարդու շահագործման հնարավորությունների վոչնչացում, դասակարգերի վոչնչացում: Պանային տնտեսություն: Բաշխման սոցիալիստական սկզբունք՝ հավասար աշխատանքի համար հավասար մթերք: Սոցիալիզմի ժամանակ պետությունը պահելու անհրաժեշտությունը:

4. Կոմունիզմ.— Կապիտալիզմի բոլոր հակասություններից աղատ անդասակարգ հասարակություն: Հիմնված արտադրության գործիքների և միջոցների հասարակական

սեփականության վրա, յերբ արտադրությունը կառավարվում է ամբողջ հասարակության կողմից և բաշխումը տեղի է ունենում «յուրաքանչյուրից ըստ ընդունակության, յուրաքանչյուրին ըստ պահանջի» սկզբունքի համաձայն։ Կոմունիզմն այնպիսի հասարակություն է, վորտեղ բացակայում են քաղաքի և գյուղի, մտավոր և Փիզիկական աշխատանքի մեջ յեղած հակադրությունները։ Պետական իշխանության բացակայությունը կոմունիզմի ժամանակի։

## II ԹԵՄԱ. ՆԵՊ-Ի ԵՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՅԵՎ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՏԱՊՆԵՐԸ

1. Պրոլետարիատի դիկտատուրայի տնտեսական հաղարականությունը 1917-1919 տարիների շրջանում։ Իշխող բարձունքների գրավումը։ — Հողի ազգայնացումը, խոշոր կալվածատիրական հողատիրության վոչնչացումը։ արդյունաբերության, բանկերի, տրանսպորտի, կապի միջոցների և այլն ազգայնացումը։ Բանվորական կոնտրոլ։ Բանվորական կոնտրոլից արդյունաբերության կառավարմանն անցնելը։

2. Ռազմական կոմունիզմ։ — Նրա պայմանավորվածությունը քաղաքացիական պատերազմով։ Ռազմական կոմունիզմի հիմնական գծերը, պարեն-մամնատրում, գլավիներ։ Արդյունաբերության ազգայնացման հետագա զարգացումը։

Աշխատանքային պարհակի կիրառումը։ Կուլտակաթափման անցկացումը գյուղում և կոմբեներ (չքափորական կոմիտեներ) կազմակերպելը։ Գյուղի հավասարեցումը, Գյուղացիական հարցին վերաբերող՝ լենինի յերկրորդ և յերրորդ լոգունդները։ Ժողովրդական տնտեսության վիճակը քաղաքացիական պատերազմի վերջերքին։

3. Նոր տնտեսական հաղարականությունը յեվ նրա շրջանները.

ՆԵՊ-ին անցնելու պատճառները։ ՆԵՊ-Ի եյությունը, նրա յերկակի բնույթը։ «ՆԵՊ-Ը վորպես պրոլետարական պետության հասուկ քաղաքականություն, վորը նկատի ունի կապիտալիզմի թույլատրումը՝ իշխող բարձունքները պրոլետարական պետության ձեռքին գտնվելու պայմանում, վորն նկատի ունի սոցիալիստական տարրերի հաղ-

թանակը կապիտալիստական տարրերի նկատմամբ, նկատի ունի դասակարգերի վոչնչացումը, սոցիալիստական եկոնոմիկայի Փունդամենտի կառուցումը»։ (ՍՃԱԼԻՆ)

Հինգ տնտեսաձև։ Սոցիալիստական սեկտորի դերը մանր-ապրանքային սեկտորի վերափոխման գործում և կապիտալիստական տարրերի վոչնչացումը։ Մանր ապրանքային արտադրողի յերկակի բնույթը և նրա վերափոխման պրոբելմը։ Լենինյան կոռպերատիվ պլանը։ Գյուղացիության չքավորմիջակային մասսաների հետ պրոլետարիատի շաղկապի պրոբլեմը։ Դասակարգային պայքարը ՆԵՊ-Ի շրջանում և, «ով-ում» պրոբլեմի լուծումը։

ՆԵՊ-Ի, վորպես համատարած նահանջի, տրոցկիստական ըմբռնման քննադատությունը։ ՆԵՊ-Ի այդ մեկնաբանման կապը մի յերկրում սոցիալիզմի կառուցման հնարավորության տրոցկիստական ժխտման հետ։

ՆԵՊ-Ի աջ ոպորտունիստական ըմբռնման քննադատությունը։ Աջերի կողմից ՆԵՊ-Ի յերկակի բնույթյունը չհասկանալը և ՆԵՊ-Ի մեկնաբանումը՝ վորպես շուկայական տարրերի անահամանավակ և ազատ զարգացում և վորպես կուլտկի ներածում սոցիալիզմի մեջ։

4. Վերականգնման շրջան։ — Վերականգնման շրջանի եյությունը։ Խոշոր ինդուստրիայի վերականգնման համար նախապայմաններ ստեղծելը։ Գյուղատնտեսության, մանր-տնայնազործական արդյունաբերության, թեթև արդյունաբերության և ծանր ինդուստրիայի վերականգնման փոխադարձ հարաբերությունը և հաջորդականությունը։ Սոցիալիստական արդյունաբերության առաջատար գերը։ Վերականգնման շրջանում ռեկոնստրուկտիվ պրոցեսները ժողովրդական տնտեսության մեջ։ Վերականգնման շրջանում լենինյան կոռպերատիվ պլանի ծավալումը։ Փողային ռեֆորմի նշանակությունը և ամուր վայրուտայի ստեղծումը։ Դասակարգային պայքարը վերականգնման գործում և «ով-ում»-ի պրոբլեմը։ Քաղաքի և գյուղի կապիտալիստական տարրերի սահմանափակումը և արտամը-ղումը։

Վերականգնման շրջանի գնահատականի ինդրում հականագույն աշխատական տրոցկիզմի և աջ ոպորտունիզմի դրույթների քննադատությունը։

5. Վերակառուցման շրջանի. — Վերակառուցման շրջանին անցնելը: Վերակառուցման շրջանի հիմնական դժերը: Սոցիալիստական ծանր ինդուստրիայի զարգացումը և նրա նշանակությունը վողջ ժողովրդական տնտեսության սոցիալիստական վերակառուցման համար: Արտադրական շաղկապը վորպես շաղկապի հիմնական ձև վերակառուցման շրջանում: Առեւտրական շաղկապի ամրացումն արտադրական շաղկապի հիման վրա: Գյուղատնտեսության հանրայնացման պրոցեսը: Խորհանտեսությունների շինարարությունը: Կոլտնտեսությունների շինարարությունը՝ վորպես գյուղատնտեսության մեջ մանր-ապրանքային տնտեսության վերափոխման և կապիտալիզմի արմատների վոչընչացման ուղի: Համատարած կոլեկտիվացումը և այս բազայի վրա կուլակության՝ վորպես դասակարգի վերացումը:

Վերակառուցման շրջանի դժվարությունները, սրանց պատճառները և հաղթահարման ուղիները: Վերակառուցման շրջանի դժվարությունները վորպես աճման դժվարություններ և վորպես հետևանք դասակարգային պայքարի սրման: Տեմպերի պրոբլեմը վերակառուցման շրջանում:

Վողջ ժողովրդական տնտեսության վերակառուցման ավարտումը և ժողովրդական տնտեսության բոլոր ճուղերի համար նորագույն տեխնիկական բաղայի ստեղծումը՝ վորպես յերկրորդ հնդամյակի տնտեսական խնդիր:

Վերակառուցման շրջանի մասին աջ ոպորտունիստների դրույթների քննադատությունը: Վերակառուցման շրջանի հիմնական հարցերի մասին հականեղափոխական տրոցկիզմի քննադատությունը: Գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման հարցերում «Ճախլիկ» խոտորումների քննադատությունը:

6. ՆԵՊ-ի վերջին ետապը-սոցիալիզմի շրջանը մըտնելը: Ընկ. Ստալինը ՆԵՊ-ի վերջին ետապի՝ վորպես սոցիալիզմը թեակոխելու շրջանի մասին: Վողջ ժողովրդական տնտեսության մեջ սոցիալիստական սեկտորի բացարձակ գերակշռումը: Սոցիալիստական ինդուստրիալի, հատկապես ծանր ինդուստրիայի աճման արագ տեմպերը: Աշխատանքի սոցիալիստական ձևերի՝ սոցմրցման ու հարմածայնության զարգացումը:

Դործագրկության վերացումը: Գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման և համատարած կոլեկտի-

վացման հաջողությունները: Սոցիալիստական գյուղատրնտեսության վերակշռող դերը գյուղում: Կոլտնտեսային գյուղացիությունը վորպես յերկրագործության կենտրոնական դեմք և վորպես խորհրդային իշխանության իրական հիմնական հենարանը գյուղում: Համատարած կոլեկտիվացման հիման վրա կոլվակության՝ վորպես գասակարգի վերացումը և կապիտալիզմի արմատների վերջնական ջլատումը գյուղում:

Գյուղացիության չերտավորման հիմքի քայլայումը և աղքատության ու պառապերիզմի վոչնչացումը գյուղում: Հնդամյակի յերրորդ տարին վորպես սոցիալիստական եկոնոմիկայի ֆունդամենտի կառուցման ավարտման տարի: Վողջ ժողովրդական տնտեսության մեջ «ով-ում»-ի հարցի լուծումը հոգուտ սոցիալիզմի: Դասակարգային պայքարի ուժեղ սրումը տվյալ ետապում: Ընկ. Ստալինի վեց ցուցումները, վորոնք ապահովում են սոցիալիզմի հաջող կառուցումը:

Առաջին հնդամյակի հանրագումարները: Թույլ ազգարարային յերկրեց ԽՍՀՄ-ի վերափոխումը հղոր, անկախ ինդուստրիալ յերկրի: Կապիտալիստական ելեմենտների լիկ վիդացիան և արտամղումը, ժողովրդական տնտեսության բոլոր բնադավառներում սոցիալիստական սկզբունքի հաղթանակը, ԽՍՀՄ-ում դասակարգերի վոչնչացման ու սոցիալիստական հասարակություն կառուցելու համար անհրաժեշտ տնտեսական բաղայի սաեղծումը:

Հասարակական սեփականության պաշտպանությունը վորպես կենտրոնական խնդիրներից մեկը ներկա ետապում:

Դասակարգային պայքարի ձևերը ներկա ետապում: Հեղափոխական դգոնության ուժեղացման անհրաժեշտությունը:

Ներկա ետապի գնահատականի խնդրում աջերի և «Ճախլիկ»-ի դրույթների քննադատությունը: ՆԵՊ-ի արդի ետապի մասին հականեղափոխական տրոցկիզմի հայացքների քննադատությունը:

III ԹԵՇՄ. Յերկրի ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԻՆԴՈՒՍՏՐԱՅՈՒՄ

1. Կապիտալիստական և սոցիալիստական ինդուստրացում. Սոցիալիստական ինդուստրացման արմատական տար-

բերությունը կապիտալիստականից։ Լենինը և Ստալինը սոցիալիստական ինդուստրացման մասին։ Խոշոր մեքենական ինդուստրիան վորպես սոցիալիզմի նյութական բազա։ Սոցիալիստական ինդուստրացումը և գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցումը։ Ազգային մարզերի և շրջանների ինդուստրացումը վորպես այդ շրջանների տնտեսական ու կուլտուրական հետամնացության վերացման ուղի։

